ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ-301-2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «12» «07» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության տնօրեն Ա. Սարգսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1168. Արվեստների ծրագիր» ծրագրի «11005. Մշակութային միջոցառումների իրականացում» միջոցառման (տող՝ «Պարարվեստի նախագծեր») (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել «Զարկ ֆեստ» («Յարխուշտա») փառատոնի կազմակերպումը (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝ ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջոցառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝

մանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան սույն պայմանագրի 4.1-ին կետով հաշվետվությունների համար սահմանված ժամկետից հետո 20 օրվա ընթացքում:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանը հատկացնում է 49996,8 հազար (քառասունինը միլիոն ինը հարյուր իննսունվեց հազար ութ հարյուր) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 23-րդ մասի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023 թ. հուլիսի 23-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):

5.2. Ծրագրով նախատեսված ոչ ֆինանսական ցուցանիշները չեն կարող ներառվել 27.01.2023 թ. դրամաշնորհի տրամադրման N ՄՇԴ-55-2023 պայմանագրով նախատեսված ոչ ֆինանսական ցուցանիշներում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար:

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների կման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ
Երևան, Վ. Սարգսյան 3	ք. Երևան, Մաշտոցի 46
Կառավարական տուն N 2	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	հ/հ 900018009382, հվհհ՝ 02880985
հ/հ 900011032878, հվհհ 02698732	հեռ՝ 096660933
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
----------Հ. Հանոբյան	----------Ա. Մկրտչյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ. Տ.	Կ. Տ.

N 06 Բ-207-2023 պայմանագրի

Ծ Ր Ա Գ Ի Ր

«Զարկ ֆեստ» («Յարխուշտա») փառատոնի կազմակերպման

1	Կազմակերպության անվանում	«Ժողովրդական երաժշտության և պարի ազգային կենտրոն» ՊՈԱԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Հասցե՝ ք. Երևան, Մաշտոցի պող. 46
3	Ծրագրի անվանում	«Զարկ ֆեստ» («Յարխուշտա») փառատոն
3.1	Բովանդակություն	Փառատոնի ընթացքում տարածքը բաժանված է լինելու 2 հիմնական գոտիների՝ 1. Գլխավոր բեմ և պարահրապարակ՝ այս հատվածում իրենց կատարումներով հանդես են գալու պրոֆեսիոնալ ազգագրական պարային համույթները, երաժշտական խմբերն ու երգիչ երգչուհիները: Էկրանին տեսաշարերի տեսքով անդրադարձ կարվի մարզի հյուղերին ու կենցաղին, եկեղեցիներին ու անհատականություններին: Մարզի բնակիչների ծագումնաբանությանն ու բանահյուսությանը: Բեմի դիմային հատվածում առկա է լայն տարածք, որը կծառայի, որպես պարահրապարակ: 2. Որոշ տաղավարներում կմատուցվի մարզի տվյալ սեզոնին հասունացող բերքի, մրգերի տեսականին, զուգահեռ ներկայացնելով նրանց հայկական տեսակների ծագումն ու արևմտյան Հայաստանից բերված տեսակների պատմությունը: Հանդիսատեսը հնարավորություն կունենա անվճար խնոցու թան վայելելու: Տաղավարներից երկուսը կծառայեն էթնոգրաֆիկ լուսանկարահանմանը, ուր մասնակից հանդիսատեսը հնարավորություն կունենա ամենատարբեր ժամանակներին բնորոշ զենքերերի տեսակներով, աշխատանքային գործիքներով ու տարազներով լուսանկարահանվելու:
3.2	Նպատակ	«Զարկ ֆեստ» («Յարխուշտա») փառատոնի նպատակն է. - վերաիմաստավորել ազգային արժանապատվությունը, - նորոգել հանրային ինքնագիտակցությունը, - նպաստել ուժեղ, նախաձեռնող, սեփական արժեհամակարգը, - պաշտպանող քաղաքացու ձևավորումը, - պարային ռիթմերի և դրանց ուղեկցող պատմական իրադարձությունների ներկայացման միջոցով ամրապնդել սեփական երկրին տեր կանգնելու մղումն ու գիտակցությունը, -ցույց տալ և կարևորել հանգուցային պահերին հայ ժողովրդի

		կենտրոնացման, ինքնակազմակերպման և միասնական դառնալու կարողությունը:
3.3	Անցկացման ժամկետ	22 հուլիսի, 2023 թ.
3.4	Անցկացման վայր	ՀՀ Արագածոտնի մարզ, Դաշտադեմի/Քաղենիի ամրոց
3.5	Ակնկալվող արդյունքներ	«Զարկ ֆեստ» («Յարխուշտա») փառատոնը Հայաստանի իրադարձային տուրիզմի էկոհամակարգում լինելու է տեսակով առաջին մեծամասշտաբ փառատոնը նվիրված ազգային պարին և մշակույթին: Ժամանակակից մոտեցումներով ներկայացնելու ենք հայ ժողովրդի պարը ինչպես տեղացիներին, այնպես էլ Հայաստան այցելած հյուրերին: Փառատոնի ընթացքում ներգրավելով տարբեր համայնքների ներկայացուցիչների՝ կկարողանանք բացահայտել ինչպես արդեն իսկ հայտնի պարերը այլ ձևաչափերով, այնպես էլ նոր հատուկ միայն տվյալ համայնքի պարերը, դրանով իսկ հնարավորություն կտանք, որպեսզի յուրաքանչյուրը իր հերթին ներկայացնի պարերի իրենց մոտեցումները, իրենց տարբերակները: Փառատոնի անցկացման վայրը՝ Դաշտադեմի ամրոցը, լինելով պատմամշակութային ժառանգության հրաշագեղ միջնաբերդ-դղյակ, ցավոք, այսօր ոչ այնքան հայտնի է նույնիսկ տեղացիների համար: Փառատոնի շնորհիվ զարկ կտանք նաև կառույցի ճանաչելիության բարձրացմանը դրանից բխող բոլոր դրական հետևանքներով, վերջինս իր հերթին կնպաստի նաև ամբողջ գյուղի և հարակից շրջանների կենսամակարդակի բարձրացմանը:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	1000-1500 այցելու, 1 համերգ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900011032878, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Ժողովրդական երաժշտության և պարի
ազգային կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Մաշտոցի 46
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900018009382, հվհհ՝ 02880985
հեռ.՝ 096660933
Տնօրեն՝
Ս. Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
«12» «07» 2023 թ.
N ՄՇԴ-301-2023 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Զարկ ֆեստ» («Յարխուշտա») փառատոնի կազմակերպման ծախսերի

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Միավոր	Քանակ	Միավորի արժեքը (դրամ)	Գումարը (հազար դրամ)
1	**Ստեղծագործական և կազմակերպական անձնակազմի վարձատրություն** *(ներառյալ հարկերը)* *				**3720.0**
	Պրոդյուսեր	մարդ	1	400000	400.0
	Պրոդյուսերի օգնական	մարդ	1	200000	200.0
	Երաժշտական մասի պատասխանատու	մարդ	1	250000	250.0
	Սցենարիստ	մարդ	1	370000	370.0
	Ռեժիսոր	մարդ	1	380000	380.0
	Տեխնիկական մասի համակարգող	մարդ	1	200000	200.0
	Բեմի պատասխանատու	մարդ	1	280000	280.0
	Համակարգող	մարդ	3	200000	600.0
	Կազմակերպիչ	մարդ	4	110000	440.0
	Ֆինանսական համակարգող (հաշվապահ)	մարդ	1	150000	150.0
	Գնումների համակարգող	մարդ	1	150000	150.0
	Հաղորդավար	մարդ	2	150000	300.0
2	**Երաժշտական և պարային խմբերի ծառայություն** (միջին)	խումբ	4	940000	**3760.0**
3	**Բեմական կոնստրուկցիաների, լուսաձայնային տեխնիկայի, հոսանքի ապահովման և կահավորման ծառայություններ**				**19252.0**
3.1	**Բեմական կոնստրուկցիաների ապահովում** (1 բեմահարթակ (14 մ x 8 մ x 1-3 մ), 2 բեմահարթակ (3մx x 8մ x 6-8մ) բեմի ծածկ, մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքներ, բեռնափոխադրում (մեծ բեռնատար՝ 4 հատ)	ծառայություն	1	5890000	5890.0

3.2	**Լուսային տեխնիկայի ապահովում, սպասարկում, մոնտաժում, ապամոնտաժում** (լուսային կառավարման վահանակ (Lighting console) շարժական լուսարձակներ՝ 150 հատ, շարժական լուսարձակներ (հիբրիդ) նախատեսված ամրոցի լուսավորության համար՝ 100 հատ, ԼԵԴ լուսարձակ՝ 100 հատ, ԼԵԴ էկրան՝ 2 հատ, էկրանի պրոցեսոր և համակարգիչ՝ 1 հատ, մոնտաժման, էկրանների մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքներ, լուսային տեխնիկայի մոնտաժման, ապամոնտաժման և սպասարկման աշխատանքներ)	ծառայություն	1	10560000	10560.0
3.3	**Բեմի և նախատեսված տարածքի ձայնային համակարգի ապահովում, սպասարկում, մոնտաժում, պամոնտաժում** (ձայնային կառավարման վահանակ (Mixing console) թվային համակարգող սարք՝ 2 հատ, խոսափող (փափուկ)՝ 28 հատ, անլար կապի համակարգ՝ 8 հատ, բեմի ձայնային համակարգ՝ 1 հատ, մոնտաժման, ապամոնտաժման, սպասարկման աշխատանքներ)	ծառայություն	1	2202000	2202.0
3.4	**Հոսանքի ապահովում և կահավորում** գեներատոր (ներառյալ վառելիք, 150 կվ, 2 օր)	ծառայություն	1	600000	600.0
4	**Ստեղծագործական խմբերի տեղափոխման, վրանների, սեղանների, աթոռների, շարժական հանդերձարանների տեղափոխման, տեղադրման ծառայություններ**				**5690.0**
	Ստեղծագործական խմբերի տեղափոխում ավտոբուս՝ Երևան-Դաշտադեմ-Երևան	երթ	14	135000	1890.0
	Հանդիսատեսի տեղափոխում՝ Երևան-Դաշտադեմ-Երևան, Աշտարակ-Դաշտադեմ-Աշտարակ, Գյումրի- Դաշտադեմ-Գյումրի, Թալին- Դաշտադեմ-Թալին (ավտոբուս 50 տեղ) (միջին)	երթ	8	120000	960.0
	Վրանների և սեղանների տեղափոխում	հատ	1	200000	200.0
	Շարժական հանդերձարան (2 հատ, 5մx5մ)	հատ/օր	2	180000	360.0
	Վրաններ ցուցահանդես-տոնավաճառի համար (ներառյալ տեղադրումը)	հատ	30	40000	1200.0
	Սեղաններ ցուցահանդես-տոնավաճառի համար (ներառյալ տեղադրումը)	հատ	60	8000	480.0
	Նստատեղերի տեղափոխում, տեղադրում	հատ	400	1500	600.0
	Գովազդային, տպագրական, հանրահռչակմանն ուղղված ծառայություններ				**7257.0**
	Տպագրական նյութերի ձևավորում	փաթեթ	1	267000	267.0
	Թռուցիկ	հատ	10000	31	310.0
	Ազդագիր Ա3	հատ	1000	800	800.0
	Բաներների տպագրություն և տեղադրում	քմ	270	6000	1620.0
	Բեյջ	հատ	250	800	200.0
	Շապիկ	հատ	50	5000	250.0

5	Լոգոտիպի ստեղծում	հատ	1	250000	250.0
	Ֆոտո-տեսանկարահանում (2 տեսախցիկ, 1 դրոն)	օր	1	480000	480.0
	Տեսաֆիլմի պատրաստում (30-35 րոպե)	հատ	1	1500000	1500.0
	Գովազդային հոլովակի պատրաստում (20-35 վրկ)	հատ	1	350000	350.0
	Սոցիալական ցանցերում բովանդակության ստեղծման ծառայություն (կոնցեպտի, ռազմավարության մշակում, գրաֆիկ-դիզայն, սոցիալական հարթակների (Facbook, instagram) վարում, հարթակներում փառատոնի մասին տեղեկատվության տարածում և այլն)	հատ	1	500000	500.0
	Ֆոտո տաղավարի կազմակերպման ծառայություն՝ ամբողջությամբ կահավորած տաղավար, պրոֆեսիոնալ լույսեր, գորգեր, տարազներ տղամարդու, կանացի և երեխաների համար, տարբեր չափսերի մոտ 8 հատ, հայկական ավանդական զարդեր, կենցաղի պարագաներ, պրոֆեսիոնալ լուսանկարիչ, իր օգնականների հետ (6 ժամ): Լուսանկարների մշակում և տեղադրում google drive հարթակում	հատ	1	730000	730.0
6	**Այլ կազմակերպական ծառայություններ**				**1985.0**
	Սննդի ապահովում՝* (250 մարդ, 1 օր)	մարդ/օր	250	5000	1250.0
	Հյուրանոց կազմակերպչական անձնակազմի համար (15 մարդ, 1 օր)	մարդ/օր	15	15000	225.0
	Բիոզուգարանների տեղադրում, սպասարկում՝ 6 հատ, 1 օր	հատ/օր	6	85000	510.0
	ԸՆԴԱՄԵՆԸ				**41664.0**
	ԱԱՀ**				**8332.8**
	ԱՄԲՈՂՋԸ				**49996.8**

***Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով**

**** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կատարողի կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900011032878, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
---------- Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՌՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

«Ժողովրդական երաժշտության և պարի
ազգային կենտրոն» ՊՈԱԿ
ք. Երևան, Մաշտոցի 46
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900018009382, հվհհ՝ 02880985
հեռ. 096660933
Տնօրեն՝
---------- Ա.Ա. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 3
«12» «07» 2023 թ.
N ՄՇԴ-301-2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
« 12 « 04 » 2023 թ.
N ՄՇԴ-304/2023 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2023 թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____,
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)

բովանդակային վարչության « » « » 2023 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2023 թ.-ի թիվ ե - ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Գլխավոր քարտուղար՝

Տնօրեն՝

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝